ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի մարտի 29-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 28.03.2024թ. ու 29.03.2024թ. ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 29.03.2024թ. տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում</u> N 1

«Հարգելի գործընկերներ, Տվյալ մրցույթի 1 լոտի (դյուրակիր համակարգիչներ) տեխնիկական բնութագրում առկա է դյուրակիր համակարգչի դիսպլեյի պահանջ՝ առնվազն 120 Հց: Սա խաղային դյուրակիր համակարգչի դիսպլեյին բնորոշ թարմացման արագություն է: Գրասենյակային աշխատանքի համար սովորական դյուրակիր համակարգիչների մոդելներում հաճախականությունը կազմում է 60 Հց: Արդյո՞ք Ձեզ իսկապես անհրաժեշտ են խաղային դյուրակիր համակարգիչներ, որոնք ունեն նաև ավելի բարձր գրաֆիկական պահանջներ և միևնույն ժամանակ բավականին համեստ ապարատային (կրիչ և հիշողություն) ռեսուրսներ: Միգուցե՞ բավարար է առաջարկել IPS դիսփլեյով արդիական դյուրակիր համակարգչի մոդել, որը կունենա դիսպլեյի թարմացման արագություն 60 Հց: Խնդրում ենք պարզաբանել այս հարցը»:

<u>Պարզաբանում N 1</u>

«Հայտնում ենք, որ առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին»:

<u>Հարցադրում</u> N 2

«Հարգելի գործընկեր, 2-րդ չափաբաժնի բազմաֆունկցիոնալ սարքի տեխնիկական բնութագրում նշված է՝ սկանավորման արագությունը առնվազն 25էջ/ր: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք կարող ենք դիտարկել տվյալ պահանջը Letter ձևաչափի համար: Խնդրում ենք հաշվի առնել, որ այս դեպքում հնարավոր կլինի առաջարկել մոդել, որը անհամեմատ ավելի մատչելի է, քան սանմանված գնման գինը»:

<u>Պարզաբանում N 2</u>

«Հայտնում ենք, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի՝ բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի, տեխնիկական բնութագրում պարամետրերը նշված կամ դիտարկված են A4 ֆորմատի համար»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: